ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

08-ը Մարտի 2025թ.

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ԱՊՐԻԼԻ 7-Ի՝
ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Թանկագի՛ն մայրեր, սիրելի՛ կանայք.

Մայրության և գեղեցկության օրվա, Սուրբ Մարիամ Աստվածածնի Ավետման տոնի կապակցությամբ սրտանց շնորհավորում եմ բոլորիդ: Մենք մայրամեծար ազգ ենք և արժանիորեն գնահատում ենք այն բացառիկ դերը, որ ունեն մայրերը ամուր և օրինակելի ընտանիքների ստեղծման, սերունդների հայեցի դաստիարակության, ազգային ու մարդկային բարձր արժեքների փոխանցման գործում:

Խորին երախտագիտությամբ առանձնահատուկ շնորհավորում եմ հայրենիքին ամենաթանկը նվիրաբերած հերոսածին մայրերին, որոնք դաստիարակել են հայրենասեր ու քաջարի զավակներ: Յուրաքանչյուրիս գործը պիտի ուղղվի նրանց անսահման կարոտին, որդիների անմար սխրանքին համարժեք ուժեղ ու բարեկեցիկ հայրենիքի ստեղծմանը:

Սիրելի՛ մայրեր.

Գնահատելի է ձեր մեծ առաքելությունը, որը կատարում եք անմնացորդ նվիրումով ու ամենայն պատասխանատվությամբ: Կրկին շնորհավորում եմ ազգային և եկեղեցական տոնացույցում ձեզ նվիրված ամենաջերմ ու գեղեցիկ օրվա՝ Ապրիլի 7-ի առիթով. մաղթում եմ ձեզ քաջառողջություն, անսպառ եռանդ, ընտանեկան երջանկություն և բարեկեցություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ